VERMONT-Ի ՏԱՐԱՆՑԻԿ ՄԻՋԱՆՑՔ. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Մենք ծրագրում ենք Vermont Av-ով երթևեկելու նոր եղանակ

Metro-ն ծրագրում է Vermont Av-ով երթևեկելու ավելի լավ եղանակ, որը կախված չէ բացառապես ավտոմեքենայից:

Քանի որ սա Լոս Անջելես վարչաշրջանի ամենածանրաբեռնված ավտոբուսային միջանցքն է, հասարակական տրանսպորտի ուղևորներն արժանի են ավտոբուսային ծառայությունների այնպիսի բարեփոխումների, որոնք հնարավոր է իրականացնել արագացված ժամկետներում: Metro-ն մշակում է Արագընթաց ավտոբուսային տրանսպորտի (Bus Rapid Transit, BRT) համակարգ, որը կապահովի ավելի արագ և հուսալի սպասարկում՝ նվազեցնելով ավտոբուսների կողմից խցանումներում անցկացրած ժամանակը: Հասարակական տրանսպորտի այս բարձրորակ բարեփոխումները նախատեսված են այն համայնքների համար, որոնք ունեն տրանսպորտային ենթակառուցվածքների և ծառայությունների ամենամեծ կարիքները:

Վերմոնտի տարանցիկ միջանցքը (Vermont Transit Corridor, VTC), որը սպասարկվում է 204 և 754 գծերով, տարածվում է մոտ 12.4 մղոն՝ Sunset Bl-ից 120 St: Լինելով Լոս Անջելեսի ամենահին տրանսպորտային միջանցքներից մեկը՝ այն մասամբ հետևում է պատմական տրամվայի երթուղու անցած ճանապարհին: Այսօր այն սպասարկում է մի քանի խիտ բնակեցված, բազմազան և հասարակական տրանսպորտից կախված համայնքներ՝ օրական ապահովելով ավելի քան 38,000 ուղևորի նստեցում: VTC-ն նաև կապվում է մի քանի երկաթուղային գծերի (B, C, D և E), ավելի քան 20 արևելք-արևմուտք ուղղությամբ ավտոբուսային երթուղիների, ինչպես նաև կարևոր նշանակության վայրերի հետ, օրինակ՝ Kaiser Permanente և Children's Hospital Los Angeles՝ Vermont/ Sunset-ում:

Միջանցքի երկայնքով գտնվում են նաև բազմաթիվ կրթական հաստատություններ, օրինակ՝ Manual Arts High School, Los Angeles City College, American Career College, West Coast University, Braille Institute և the University of Southern California (USC): Միջանցքի տարածքում գտնվում են նաև տարածաշրջանային նշանակության բազմաթիվ համայնքային օբյեկտներ, այդ թվում՝ Exposition Park-ը, թանգարաններ, մարզական համալիրներ, մի շարք հանրային հաստատություններ և բազմաթիվ կրոնական կազմակերպություններ:

Նախորդ ուսումնասիրությունները

Մենք լսեցինք ձեզ: Metro-ն 2017 և 2019 թվականներին կատարեց երկու ուսումնասիրություն, որոնք ուսումնասիրում էին միջանցքի համար հնարավոր BRT-ն և երկաթուղային այլընտրանքները: 2022 թ. հունիսին Metro-ն համագործակցեց մի շարք համայնքային խմբերի հետ՝ տարանցման տարբերակների վերաբերյալ կարծիքներ հավաքելու նպատակով: Այս տեղեկությունների հիման վրա Metro-ն առաջ է տանում BRT-ն, որի ավարտը նախատեսվում է մինչև 2028 թ. կեսերը, ինչպես նաև շարունակում է ուսումնասիրել երկաթուղային տարբերակները՝ հետագա ֆինանսավորման առկայության պայմանով:

Նախագծի ակնարկ

Մինչև 2028 թ. բարձրորակ BRT-ն զգալի առավելություններ կտրամադրի այն համայնքներին, որոնք այն սպասարկում է, այդ թվում՝

- 12.4 մղոն երկարությամբ շուրջօրյա եզրային հատվածով անցնող BRT ավտոբուսային գծեր
- 26 բարեկարգված կանգառ՝ 13 խաչմերուկային վայրերում
- Բարեկարգված հետիոտնային անցումներ՝ ավելի բարձր տեսանելիության և բարելավված անվտանգության համար
- Բարելավված լուսավորություն՝ անվտանգության և ապահովության բարձրացման համար
- Ժամանակին ժամանում և սպասման ժամանակի կրճատում
- Գծանշումների վերականգնում և/կամ ավտոբուսային գծերի ծածկույթի վերանորոգում

BRT-ի նպատակն է ապահովել բարձրակարգ հյուսիս-հարավ ուղղությամբ տարանցման ծառայություն, որը կապ կհաստատի կարևոր նշանակության վայրերի հետ՝ բարելավելով աշխատատեղերի, կրթության և անհրաժեշտ ծառայությունների հասանելիությունը: Այն նաև կամրապնդի կապերը տարածաշրջանային տրանսպորտային ցանցի հետ և կօգնի բավարարել տարածքի աճող տրանսպորտային կարիքները:

Metro®

ԽՈՐՀՐԴԻՄ ԵՆՔ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ.
2.00.20.EL.U30.U811v0C.
2#-####XX ©20## LACMTA

Երթևեկելը VTC-ով

Համայնքի կողմից ստացված կարծիքների հիման վրա Metro-ն նախատեսում է եզրային հատվածով անցնող BRT, որը յուրաքանչյուր ուղղությամբ կպահանջի օգտագործել երթևեկելի գիծը՝ կայանման գծին կից, այդպիսով պահպանելով առկա կայանատեղիների մեծ մասը:

BRT-ի հիմնական առանձնահատկություններն են՝

> Աջակողմյան երթևեկելի գծի վերափոխում՝ միայն ավտոբուսների համար նախատեսված գծի

> 12.4 մղոն երկարությամբ՝ շուրջօրյա գործող, ավտոբուսների համար առանձնացված եզրային գծեր՝ Sunset Bl-ից 120 St

> Բարեկարգված կանգառներ՝ նստարաններով, ծածկերով, Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին օրենքի (Americans with Disabilities Act, ADA) պահանջներին համապատասխան տարրերով, անվտանգության և ապահովության բարելավման համար նախատեսված լուսավորությամբ, աղբամաններով, ավտոբուսների իրական ժամանակի տեղեկատվության ցուցադրման էկրաններով և արտակարգ իրավիճակների կանչի կոճակներով

> Ավելի հաճախակի, անվտանգ և հուսալի ծառայություն

> Տրանսպորտային ազդանշանների առաջնահերթություն

> Բոլոր դռներով նստեցում՝ ուղևորների արագ սպասարկման համար

> Ավտոբուսային ելուստային հարթակներ կանգառների մեծ մասում՝ անվտանգության բարելավման նպատակով կանգառների և հետիոտնային տարածքների ընդլայնման, ինչպես նաև ավելի կարճ անցումների ապահովման համար

> Բերակարգված հետիոտնային և հեծանվային հասանելիություն

Պատկերում ներկայացված է եզրային հատվածով անցնող BRT գիծը՝ փողոցային կայանատեղիներին կից

Միասին կառուցենք ավելի լավ ապագա

Vermont-ի տրանսպորտային միջանցքի (Vermont Transit Corridor) նախագիծը կարևոր քայլ է դեպի Լոս Անջելեսում ավելի հավասար և կայուն տրանսպորտային համակարգի ստեղծում: Միասին մենք կարող ենք ստեղծել այնպիսի ապագա, որտեղ հասարակական տրանսպորտը կաջակցի համայնքներին:

կապվեք մեզ հետ

Metro
One Gateway Plaza, MS 99-13-1
Los Angeles, CA 90012

213.922.2846

vermontcorridor@metro.net

metro.net/vermont

losangelesmetro

Metro

25-1084 ©2026 LACMTA